ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 1-ին, կիրակի.- Բ կիրակի զկնի Հոգեգալստեան: Տօն կաթողիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Տաճարի Լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը՝ «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Մաղթանք Ս. Էջմիածնի:

***

Հունիսի 8-ին, կիրակի.- Գ կիրակի զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տրդատ աբեղա Մարտիրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Այսօր նոր ժողովուրդ. ցնծացէք ընդ գալուստ Հոգւոյն Սրբոյ մեծացուցանելով զելոյն ի Հօրէ» բնաբանով (շարական Հոգւոյ գալստեան):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Այսօր Հ. Սիմեոն Օտապաշյանի, օր. Լորա Կնունյանի և պրն. Արթո Որբերյանի ղեկավարությամբ մի խումբ մասնագետներ այցելեցին Մայր Աթոռ: Խումբը կազմակերպված էր Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի երիտասարդաց բաժնի և Հայ Օգնության Ֆոնդի կողմից և բաղկացած էր 34 մասնագետներից՝ Ամերիկայի զանազան շրջաններից:

***

Հունիսի 9-ին, երկուշաբթի.- Սրբոցն Եպիփանու Կիպրացւոյն, Բաբելայ հայրապետին և երից աշակերտաց նորին:

Այսօր Հոգևոր Մեմարանում, տեսուչ Հալկազուն ծ. վրդ. Նաջարյանի

նախագահությամբ, գումարվեց ամավերջյան դասախոսական ժողովը և ամփոփվեցին ու քննարկվեցին Հոգևոր Ճեմարանի քննությունների և ամբողջ տարվա արդյունքները: Ժողովի ընթացքում Տեսչարան բարձրացավ Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը, գնահատանքի և օրհնության խոսք ուղղելով, նաև իր մտածումները կիսեց դասախոսների հետ ուսման, կրթության և ուսանողների ընդհանուր վիճակի մասին:

⁂

Հունիսի 10-ին, երեքշաբթի.- Սրբոցն Կոստանդիանոս թագաւորին և մօրն նորայ Հեղինեայ:

Այսօր Վեհարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ Հոգևոր Ճեմարանի ուսումնական տարվա փակման հանդիսությունը (տե՛ս էջ 244-251):

⁂

Հունիսի 14-ին, շաբաթ.- Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Այսօր, երեկոյան ժամերգության ընթացքում, տեղի ունեցավ եպիսկոպոսական վեց թեկնածուներ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ ու թեմական Առաջնորդներ Տ. Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանի (Հարավային Ռուսաստանի թեմ), Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանի (Ուկրաինայի թեմ), Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանի (Սյունյաց թեմ), Տ. Առաքել վրդ. Քարամյանի (Կոտայքի թեմ), Տ. Նավասարդ վրդ. Կճոյանի (Արագածոտնի թեմ), Տ. Սեպուհ վրդ. Չուլջյանի (Գուգարաց թեմ) երդմնագրերի և Մայր Աթոռին հավատարմության հավատագրերի ստորագրության հանդիսավոր արարողությունը՝ նախագահությամբ Մայր Տաճարի Լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

⁂

Հունիսի 15-ին, կիրակի: Դ կիրակի զկնի Հոգեգալուստեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Ա-ը: Ս. Պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարեց իր անդրանիկ Եպիսկոպոսական Ձեռնադրության կարգը՝ խարտավիլակությամբ Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի և աղոթերակայությամբ Տ Գարեգին սրբեպս. Ներսիսյանի ու Տ. Ասողիկ եպսկ. Արիստակեսյանի: Վեհափառ Հայրապետը Եպիսկոպոս ձեռնադրեց և օծեց Մայր Աթոռի միաբաններ Տ. Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանին (Հարավային Ռուսաստանի թեմ), Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանին (Ուկրաինայի թեմ), Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանին (Սյունյաց թեմ), Տ. Առաքել վրդ. Քարամյանին (Կոտայքի թեմ), Տ. Նավասարդ վրդ. Կճոյանին (Արագածոտնի թեմ), Տ. Սեպուհ վրդ. Չուլջյանին (Գուգարաց թեմ): Ձեռնադրությունից հետո քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Լուսաւորեաց, լուսաւորեաց Աշխարհ Հայաստանեայց, զի հասեալ է լոյս քո եւ փառք Տեառն ի վերայ քո ծագեսցեն» բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ Նախագահի խորհրդականը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ուռնովը, Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոշկոն, ՀՀ Կրոնից

Գործոց Կոմիտեի նախագահ Լազար Սուջյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, Գուգարաց, Արագածոտնի, Սյունյաց և Կոտայքի մարզերի մարզպետները, բարձրաստիճան այլ այրեր, հյուրեր Սփյուռքից, ինչպես նաև հայ ժողովրդի հավատավոր զավակունք:

***

Հունիսի 16-ին, երկուշաբթի.- Սրբոց վկայիցն Անտոնինոսի, Թէոփիլոսի, Անիքտոսի և Փոտինոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Հարավային Ռուսաստանի թեմի նորաօծ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

***

Հունիսի 17-ին, երեքշաբթի.- Սրբոցն Դանիէլի մարգարէին և երից մանկանցն՝ Սեդրակայ, Միսաքայ և Աբեդնագովի:

Այսօր Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Ուկրաինայի թեմի նորաօծ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Սրբազանը՝ «Արի որ ընչեսդ եւ կանգնեաց ի մեռելոց, եւ լուսատու լիցի քեզ Քրիստոս» բնաբանով (Եփես. Ե 14):

Նույն օրը, երեկոյան, Վեհարանի ընդունելությունների սրահում տեղի ունեցավ Միաբանական ժողով: Միաբանական ժողովին ներկա էր նաև Կ. Պոլսո Ամենապատիվ Պատրիարք Տ. Գարեգին արքեպս. Գուզանճյանը: Վեհափառը միաբաններին ներկայացրեց իր Ավստրիա կատարելիք այցելության նպատակները, ինչպես նաև խոսեց Մայր Աթոռի ներքին կյանքի հուզող հարցերի մասին:

***

Հունիսի 19-ին, հինգշաբթի.- Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ: Եկեղեցական հանդէս յՕշական: Տօն ազգային:

Այսօր Օշական գյուղի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Արագածոտնի թեմի նորաօծ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Սրբազանը՝ «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» բնաբանով (Առակ. Ա 2):

Ս. Պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանները, Արագածոտնի մարզպետարանի պատասխանատու պաշտոնյաներ, Հոգևոր Ճեմարանի սաները և հարյուրավոր ուխտավորներ Հայաստանի տարբեր մարզերից:

Ս. Պատարագից հետո եկեղեցու բակում Արագածոտնի մարզի երաժշտական համույթների մասնակցությամբ տեղի ունեցավ հանդիսություն: Հանդիսության ընթացքում հավատացյալներին ու բազմաթիվ ուխտավորներին իր Հայրական պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը:

***

Հունիսի 22-ին, կիրակի.- Ե կիրակի զկնի Հոգեգալստեան: Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Որ ողորմեցար ի մեղս ծնեալ մարդկան Հայր երկնաւոր ըստ մարգարէին. եւ ետուր բնութեանս այսօր պարգեւ զկոյսն սուրբ՝ զծնող Որդւոյդ Միածնի. Մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեայ» (շարական. Աստուածամօր ծննդեան Ողորմեայ) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

⁂

Հունիսի 29-ին, երկուշաբթի.- Սրբոցն Կալիստրատոսի և քառասուն և իննվկայիցն և Ղունկիանոսի քահանային:

Այսօր Վեհափառ Հայրապետը, գավազանակիր ունենալով «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Տ. Բագրատ աբեղա Գալստյանին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեկնեց Ավստրիա՝ մասնակցելու Գրաց քաղաքում տեղի ունենալիք Եվրոպայի Եկեղեցիների խորհրդի էկումենիկ համաժողովին և իր անդրանիկ այցելությունը տալու ավստրիահայ համայնքին (տե՛ս էջ 5-73): Ապա Վեհափառ Հայրապետը պիտի մեկնի Մոսկվա՝ նախագահելու Կրեմլի «Ուսպենսկայա» թանգարանում բացվելիք «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսի բացման հանդիսությունը (տե՛ս էջ 74-84):

⁂

Հունիսի 29-ին, կիրակի.- Զ կիրակի զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գրիգոյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Տեր Հայրը՝ «Արդ որպէս ընկալարուք զՔրիստոս Յիսուս զՏէր, նովին գնասջիք. Արմատացեալք եւ շինեալք ի նա, եւ հաստատեալք ի հաւատս, որպէս ուսարուքն, առաւելեալք ի նմին գոհութեամբ» (Կողոս. Բ 6-8) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

⁂

Հուլիսի 4-ին, ուրբաթ:

Այսօր, Ավստրիա և Մոսկվա այցելություններից հետո, Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ Վեհափառ Հայրապետը (տե՛ս էջ 84):

⁂

Հուլիսի 6-ին, կիրակի.-ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ի Թափոր ի լերինն ձեւացուցեր զքո բնութիւնդ անտանելի գոյացութեամբ. ընդ որս եւ մեք ցնծութեամբ երգեմք քեզ՝ ողորմեայ մեզ մարդասէր» բնաբանով (շարական Վարդավառի, Ողորմեայ):

***

Հուլիսի 9-ին, չորեքշաբթի:

Այսօր, երեկոյան, Վեհարանի ընդունելությունների սրահում տեղի ունեցավ Միաբանական ժողով: Վեհափառ Հայրապետը միաբաններին ներկայացրեց Ավստրիայի Գրաց քաղաքում տեղի ունեցած Եվրոպայի Եկեղեցիների էկումենիկ համաժողովի արդյունքները, ավստրիահայ համայնքին տված իր անդրանիկ հովվապետական այցելության արդյունքներն ու տպավորությունները:

***

Հուլիսի 13-ին, կիրակի.- Բ կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հռոմից Մայր Աթոռ վերադարձած Հոգեշնորհ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Զգոյշ լերուք՝ մի՛ արհամարհիցէք զմի ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ զի հրեշտակք նոցա յերկինս՝ հանապազ տեսանեն զերեսս հօր իմոյ, որ յերկինս է» բնաբանով (Մատթ., ԺԸ 10):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***

Հուլիսի 20-ին, կիրակի.- Գ կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արժանապատիվ Տ. Զարեհ քհն. Զարգարյանը (Կանադա): «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***

Հուլիսի 21-ին, երկուշաբթի.- Սրբոց Մակաբայեցւոցն՝ եղիազարու քահանային և Ծամուսեայ և եօթն որդւոց նորին:

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Հույն Ուղղափառ Եկեղեցու Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա-ը (տե՛ս էջ 87-126):

***

Հուլիսի 27-ին, կիրակի.- Դ կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Գերմանիայի թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Պեքճյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Սրբազանը՝ «Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ» բնաբանով (Ա Կորնթ. Ա 25):

Ս. Պատարագից հետո կատարվեց՝ Հոգեհանգստյան կարգ: